

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալությամբ եւ օրհնությամբ կ'արձանագրենք 2024 տարույ ընթացքին Սր. Յակոբեանց Մայր տաճարին եւ այլ սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. Երեւանէն Սոնիա Աւետիսեան Սր. Յակոբեանց Մայր տաճարին կը նուիրէ սկիհի ձեռագործ ծածկոց մը կարմիր յատակի վրայ, եւ ձեռաց խաչի մանիշակագոյն բռնիչ մը:
(28 Մարտ)

2. Երեւանէն Տիկին Իսկուհի Դաւթեան Սր. Յակոբեանց Մայր տաճարի Սր. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը՝ շղթայով:
(7 Սեպտեմբեր)

3. Գանատայէն Լիլիթ Յովհաննիսեան Սր. Յակոբեանց Մայր տաճարի Սր. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը:
(22 Սեպտեմբեր)

4. Հայաստանէն հանգուցեալ Տ. Յարութիւն Քհնյ Դարբինեանի երէցկիւնը եւ հոգեւոր զաւակները ի յիշատակ Տ. Յարութիւն Քհնյ Դարբինեանի Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն պզտիկ քարերով, խաղողի ողկոյզներով եւ նուռերով արծաթէ սկիհ մը՝ մաղզմայով:
(24 Հոկտեմբեր)

ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

ՍԵՒԱՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ

Լուսարարապետ Ս. Աթոռոյ

